# Արձանագրություն N 2

<< ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՆԱՎԻԳԱՑԻԱ/2023/Հ-42>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

**ք.Երևան**

**05 . 04. 2023թ.**

**Մասնակցում էին ՝**

- ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ռադիոկապի ապահովման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գ. Գրիգորյան (հանձնաժողովի նախագահ),
- ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ռադիոկապի ապահովման բաժնի ռադիոկենտրոնի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Դ. Մկրտչյան,
- ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ռադիոկապի ապահովման բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան Ա. Գրիգորյան,
- ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Հ.Ասատրյան (հանձնաժողովի քարտուղար)։

**Օրակարգ ՝**

ՀՀ ոստիկանության կարիքների համար **նավիգացիայի – տեղանքի որոշման գլոբալ համակարգերի** (gps կամ համարժեք) ձեռքբերման նպատակով հայտարարված <<<ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՆԱՎԻԳԱՑԻԱ/2023/Հ-42>> ծածկագրով ընթացակարգի բացման նիստում արձանագրվեց՝

1. ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՆԱՎԻԳԱՑԻԱ/2023/Հ-42 ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետին էլեկտրոնային հայտ ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակից |
|---|---|
| 1 | ԳՍ Մոնիթորինգ ՍՊԸ |
| 2 | Էյչ Գրուպ ՍՊԸ |

Մասնակիցների ներկայացրած հայտերը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, ծրագրի կողմից ճանաչվում է որպես վավեր, և համակարգը թույլ է տալիս բացել հայտերը։

**2.Մասնակիցների կողմից առաջարկած գներ՝**

## Գնառաջարկ

| Չափաբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | 1 | ԳԱ Մոնիթորինգ ՍՊԸ | 40000000 | 33333330 AMD | 20 % | 39999996 AMD | 29000000 AMD | 20 % | 34800000.00 AMD |
| 1 | 2 | Էյչ Գրուպ ՍՊԸ | 40000000 | 33333145 AMD | 20 % | 39999774 AMD | 29432500 AMD | 20 % | 35319000.00 AMD |

**3. Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.**

Գնահատող հանձնաժողովը հայտերը ուսումնասիրելիս և գնահատելիս արձանագրեց, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ԳԱ Մոնիթորինգ ՍՊԸ-ի հայտում բացակայում է հայտի ապահովումը :

**Հանձնաժողովը որոշեց՝**

«ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՆԱՎԻԳԱՑԻԱ/2023/Հ-42» ծածկագրով գնման ընթացակարգում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ԳԱ Մոնիթորինգ ՍՊԸ-ի հայտը մերժել համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետի:

1-ին չափաբաժնի մասով «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՆԱՎԻԳԱՑԻԱ/2023/Հ-42» ծածկագրով ընթացակարգ հայտարարվում է չկայացած:

Անգործության ժամկետ է սահմանվում ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշման մասին հայտարարության հրապարակման հաջորդ օրվանից 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

**Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :**

*Հանձնաժողովի նախագահ՝* Գ. Գրիգորյան

*Հանձնաժողովի անդամներ՝* Դ. Մկրտչյան

Ա. Գրիգորյան

*Քարտուղար՝* Հ. Ասատրյան